



Հունիսի 31, 2021

Կարծիք

Արայիկ Առաքելյանն ընդդեմ [168.am](http://www.foi.am/hy/IDC/) լրատվական կայքի դեմ դատական գործի կապակցությամբ

Գործի հանգամանքները

Կադաստրի պետական կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման նախկին ղեկավար Արայիկ Առաքելյանը 2021թ. հունիսի 18-ին ներկայացրել է դատական հայց ընդդեմ «168 ժամ» ՄՊԸ-ի՝ [168.am](http://www.foi.am/hy/IDC/) լրատվական կայքում «Կեպիով ու ակնոցով խորհրդավոր անձը. ո՞վ է կանգնած Շիրակի մարզի հերթական կադրային խառնաշփոթի հետևում» վերնագրով 2021թ. ապրիլի 14-ին հրապարակված հոդվածի համար:

Նույն օրը Արայիկ Առաքելյանը ներկայացրել է երկրորդ հայցն ընդդեմ [168.am](http://www.foi.am/hy/IDC/) լրատվական կայքի՝ 2021թ. ապրիլի 24-ին հրապարակված «Իմ քայլական Կարեն Սարուխանյանը՝ կոռուպցիոն գործով անցնող կադաստրի նախկին պետի «կնքահա՞յր» հոդվածի համար:

Երկու հայցապահանջներով Արայիկ Առաքելյանը խնդրել է պարտավորեցնել լրատվամիջոցին հերքել հոդվածում հրապարակված զրպարտող բնույթի տվյալները և վճարել փոխհատուցում 700.000-ական դրամի չափով: Հայցադիմումներն ընդունվել են վարույթ, սակայն դատական քննություն դեռ չի նշանակվել:

Եզրակացություն

Զրպարտությունն անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորող փաստացի հայտարարության տարածումն է հրապարակային եղանակով՝ անկախ դիտավորությունից:

Անձը կամ լրատվամիջոցը ազատվում է զրպարտության համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է արտահայտության կամ

հրապարակման ճշմարտացիությունը: Լրագրողի դեպքում գործում է հավելյալ պաշտպանություն, ըստ որի, նա չի կարող ենթարկվել պատասխանատվության ոչ ճշմարտացի հայտարարության համար, եթե գործել է բարեխղճորեն՝ լրագրողական էթիկայի պահանջների պահպանմամբ: Այս իմաստով հաշվի են առնվում նյութի հանրային նշանակությունը, նպատակը, մատուցման եղանակը, ոճը, հասցեատիրոջ հանրային դիրքը և նրա նախկին վարքագիծը:

Առաջին հոդվածը վերաբերում է Գյումրի քաղաքի պետական մարմիններում մի շարք պաշտոնների նշանակումներին, որում հեղինակը հնչեցնում է մտահոգություն հնարավոր հովանավորչության և կոռուպցիայի մասին: Բնակաբանաբար, թեման ներկայացնում է ընդհանուր հետաքրքրություն և ունի հանրային նշանակություն: Հեղինակը նշել է, որ հայցվորը հանդիսանում է պետական բարձր պաշտոնի հավակնորդ, մինչդեռ նրա «անունը կապվում է կոռուպցիոն սկանդալների հետ», և որ բացի մի քանի քրեական գործերով ներգրավված լինելուց, կոռուպցիոն սկանդալների «կիզակետում» են հայտնվել նաև հայցվորի ընտանիքի անդամները: Հոդվածագիրն այնուհետև վկայակոչել է այդ հայտարարությունների աղբյուրները, մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազության գրությունը, որը ստացվել է ի պատասխան Forrights.am լրատվական կայքի հարցման, իսկ այնուհետև շարադրել է քրեական գործից մանրամասներ, որոնք պարունակում են փաստական ու իրավական տվյալներ հայցվորի և նրա ընտանիքի անդամների մասին: Այսպիսով, չի կարելի պնդել, որ հոդվածագիրը գործել է կամայականորեն՝ առերևույթ վերացական ու հիմնազուրկ հրապարակային հայտարարություններ կատարելով:

Երկրորդ հոդվածն ընդհանուր առմամբ նման բովանդակություն ունի: Մասնավորապես, հեղինակը գրել է, որ «Կարեն Սարուխանյանի հետ վերջերս մտերմացած Արայիկ Առաքելյանը կոռուպցիոն սկանդալային պատմության մեջ է, ընդ որում՝ ընտանյոք հանդերձ», որ կադաստրում որպես օպերատոր՝ աշխատանքի է տեղավորել իր մտերմուհուն, և որ մամուլում դատախազության կողմից տրամադրված մի փաստաթղթից ակնհայտ է դառնում, որ Արայիկ Առաքելյանը իր կնոջ անունով հողատարածքներ է վարձակալել Աշոցքի տարածաշրջանի գյուղերում և դրանք ենթավարձակալության տվել ու «մեծ փողեր աշխատել», որ այդ ժամանակ, լինելով Աշոցքի կադաստրի պետը ու խախտելով «Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» օրենքը, որով արգելվում են հարազատների անունով գրանցումները, հողատարածքները գրանցել է կնոջ անունով: Վերջում հեղինակը գրել է, որ Արայիկ Առաքելյանի նկատմամբ ՀՀ Քրեական օրենսգրքի 308-ի հոդվածի հատկանիշներով քրեական գործ էր հարուցվել նաև 2014թ., և որ այդ ժամանակ նրան պաշտոնից հեռացրել էին հենց այդ պատճառով: Հոդվածագիրը վերը նշվածը հիմնավորելու համար նույնպես վկայակոչել է մամուլի հրապարակումներ, դատախազության տվյալներ, սակայն ակտիվ հղումներ չի կատարել: Այս հոդվածի

առումով նույնպես հնարավոր չէ պնդել, որ հեղինակը վերացական եզրահանգումներ է արել:

Թեև մարդուն հանցավոր արարքների մեջ հրապարակավ մեղադրելը անձնական կյանքի և արժանապատվության լուրջ միջամտություն է, սակայն ժողովրդավարության պահանջն է, որ մամուլը հնարավորություն ունենա նման դեպքերի մասին տարածել տեղեկություններ ու գաղափարներ: Այս լույսի ներքո լրատվամիջոցը որևէ պատասխանատվության չի կարող ենթարկվել, եթե դատաքննության փուլում ապացուցում է իր հրապարակային հայտարարությունների ճշմարտացիությունը: Դրա համար տվյալ դեպքում բավարար կլինի, որ լրատվամիջոցը հիմնավորի, որ օգտվել է իրական տեղեկատվական աղբյուրներից, որոնք բարեխղճորեն վկայակոչվել են հրապարակման մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/2293/02/10 և ԼԴ/0749/02/10 որոշումներում մեկնաբանել է «տեղեկատվության աղբյուր» հասկացությունը, ըստ որի այդպիսի դերակատար են հեղինակները և լրատվական գործակալությունները, որոնք ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են և հանդես են գալիս տեղեկատվություն որոշակի միջոցներով¹:

Խնդրո առարկա երկու հոդվածներում կան հղումներ մամուլի հրապարակումների, Գլխավոր դատախազության պաշտոնական գրության, ինչպես նաև սեփական աղբյուրների վրա: Սրանք տեղեկատվական լեզիտիմ աղբյուրներ են, որոնց տարածած տեղեկության բարեխիղճ վերարտադրությունը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասի հիմքով վիրավորանքի ու գրապարտության հայցերից պաշտպանվելու արդյունավետ միջոց է ՋԼՄ-ների համար:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը, Խորհուրդը գտնում է, որ հոդվածների հեղինակը լրատվական նյութը պատրաստել ու տարածել է բարեխղճորեն: Այդուհանդերձ, սույն տեղեկատվական վեճի էլքը կախված կլինի այն հանգամանքից, թե որքանով լրատվամիջոցին կհաջողվի դատաքննության ընթացքում ապացուցել, որ վիճահարույց հրապարակումները հիմնված են իրական տեղեկատվական աղբյուրների տարածած տեղեկությունների բարեխիղճ օգտագործման վրա:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոդոյան (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

¹ Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/2293/02/10 որոշում, էջ 14:

Արա Ղազարյան - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն
Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ
Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր
Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Օլգա Սաֆարյան - Փաստաբան
Դավիթ Սանդուխյան - Փաստաբան